Ցանկ
ՀՀ Սյունիքի մարզում կիրառվող ազգային խաղերի

N	**Խաղի անվանումը**	**Խաղի նկարագրությունը**	**Իրականացման վայր, համայնք**
1.	**ՊԱՀՄՏՈՑԻ /թախկընոցի/**	Խաղացողներից մեկը պետք է աչքերը փակի որևէ տեղ, սկսի հաշվել մինչև նախնական պայմանավորված թիվը, իսկ մյուսները պետք է հասցնեն թաքնվել: Հաշվողը սկսում է փնտրել թաքնված խաղացողներին, իսկ թաքնվածները պետք է հարմար պահ գտնեն, թաքուն մոտենան այն վայրին, որտեղ որոնողը հաշվել էր և գոռան՝ Թո՛ւ, թո՛ւ Հաջորդը աչքերը փակում ու մյուսներին փնտրում է այն մասնակիցը, ում առաջինը գտել է աչքերը փակողը:	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ
2.	**ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒ**	Երեխաները ձեռք ձեռքի են տալիս, շրջան կազմում՝ նախապես մեկին մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը շրջանի դրսից մեկնումեկի թևամիջով ներս է մտնում և կատվին խաբս տալով՝ դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով, իսկ կատուն հետապնդում է նրան և նույն տեղերով մտնում ու դուրս է գալիս՝ աշխատելով բռնել մկանը:	Գորիս համայնք
3.	**ԿԱՐՄԻՐ ԿՈՃԱԿ**	Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարն իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել, իսկ	Գորիս համայնք

		վերջացնելուց հետո էլ ասում է «Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի»։	
4	**ԱՅԳԵՊԱՆ**	Խաղում են խմբով, անհրաժեշտ է կենտրոնացում և ուշադրություն։ Խմբից ընտրվում է այգեպան, ընտրում են նաև թեման՝ միրգ, բանջարաղեն, յուրաքանչյուրին տրվում է անուն։ Այգեպանի և միրգ/բանջարեղենների միջև ծավալվում է հարց ու պատասխան։ Օրինակ՝ Այգեպան - Այգեպանը հավաքեց բոլոր մրգերից/բանջարեղենից, բացի խնձորից։ Խնձոր - Օ՛յ։ Այգեպան - Ի՞նչ պատահեց։ Խնձոր - Սիրահարվեցի։ Այգեպան - Ո՞ւմ։ Խնձոր - Գազարին։ Անմիջապես պատասխանում է գազարն, ու խաղը շարունակվում է այգեպանի ու գազարի միջև։	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ
5	**ՅՈԹՔԱՐԱՆԻ** **/յոթքուռնուկի/**	Հնում եղել են ռազմական խաղեր, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ։ Այդպիսի խաղերից է նաև յոթ քարը։ Նախկինում այն խաղացել են թշնամու վահանի կոտրված կտորներով։ Խաղի մասնակիցները հավաքել են փշրված յոթ կտորները և դրանք նորից կառուցելով՝ ամրացրել են իրենց բերդը և դուրս վանել թշնամուն։ Իսկ այնուհետև վահանի կտորներին փոխարինելու են եկել յոթ տափակ քարերը։ Խաղը սկսելու համար 7 քարը շարում են իրար վրա։ Առաջինը սկսող թիմը կանգնում է շարված քարերից 7 քայլ հեռավորության վրա։ Մասնակիցները գնդակը գլորում են քարերի ուղղությամբ՝ փորձելով քանդել բուրգը։ Գլորող թիմի անդամներից յուրաքանչյուրն իրավունք ունի ընդամենը մեկ անգամ գլորել գնդակը։ Մյուս թիմը կանգնում է քարերի մոտ։ Երբ գնդակը գլորող թիմին հաջողվում է քանդել շարված 7 քարը, մյուս թիմը պետք է	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ

		այդ քարերն արագ-արագ իրար կողք դնի և վազի գնդակի հետեւից: Քարերը քանդած թիմը պետք է փորձի կրկին դրանք շարել իրար վրա, իսկ հակառակորդ թիմը հարվածի գնդակով թիմի անդամներին և թույլ չտա անել դա: Ում դիպչի գնդակը, խաղից դուրս է գալիս, իսկ եթե կարողանան գնդակն օդից բռնել, պետք է նետեն ինչքան հնարավոր է հեռու և շարունակեն խաղը՝ հասցնելով հավաքել 7 քարն իրար վրա, այնուհետև ձեռքը պահել քարերի մոտ և իրար փոխարինելով հաշվել մինչև 40-ը:	
6	**ՌԵԶԻՆ /պարան, ծապի, լապի/**	Խաղի համար ընտրում են հաստ երկար ռեզինից պարան, և խաղացողները բաժանվում են երկու թիմի կամ նույնը արվում է երկու հոգու միջև: Ընտրվում է պարանի կենտրոն և մասնակից թիմերը աջ և ձախ կողմերում փորձում են ինչքան հնարավոր է իրենց քաշել հակառակորդ թիմին: Ռեզին կարելի է խաղալ ինչպես թիմերով, այնպես էլ անհատապես: Այն խաղ է պարանի վրայով տարբեր վարժություն՝ թռիչքների միջոցով: Թիմերով խաղի դեպքում առավել ճարպիկ խաղացողները կարող են «ազատել» վարժությունը չկատարած թիմակցին, այսինքն իրենց տեղը խաղալուց բացի ևս մեկ անգամ խաղալ թիմակցի փոխարեն: Երբ մի թիմը չի կարողանում կատարել վարժություններից մեկը, «մեջ է մտնում» ռեզինը պահող թիմն ու այդպես շարունակ: Ամեն հաջորդ «մեջ մտնելիս» թիմը շարունակում է խաղն այն թվի վարժությունից, որի ժամանակ պարտվել է:	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ
7	**ՈՒԺԱԽԱՂ /պարանքաշոցի,**	Խաղի համար ընտրում են հաստ երկար պարան, և խաղացողները բաժանվում են երկու թիմի կամ նույնը արվում է երկու հոգու միջև:	Գորիս համայնք

	պարանձգոցի/	Ընտրվում է պարանի կենտրոն, և մասնակից թիմերը աջ և ձախ կողմերում փորձում են ինչքան հնարավոր է իրենց քաշել հակառակորդ թիմին:	
8	**ԱՔԼՈՐԱԿՈՌԻՎ**	Աքլորակոիվ խաղի 2 տարբերակ կա երբ աքլորներին են կռվեցնում և ընտրում հաղթող աքլորին, և երբ մարդիկ են կռվում, ինչպես աքլորները: Խաղացողները նմանակում են իրական աքլորների շարժումները, այդ պատճառով էլ կոչվում է Աքլորակոիվ: Աջ ձեռքով մեջքի կողմից բռնում են ծալված ձախ ոտքը և թռչկոտելով աջ ոտքի վրա՝ ուսով այնքան են իրար թեթևակի խփում, մինչև խաղացողներից մեկը վայր է ընկնում, պարտվում:	Գորիս համայնք
9	**ՔԱՐԿՏԻԿ /չըրչըրմանքի, քարի-քարի, տափի-տափի/**	Քարկտիկը խաղում են 5 ողորկ քարով, հարթ տեղում: Քարերից չորսը նյութական աշխարհի հիմքը համարվող չորս տարրերն են՝ ջուրը, օդը, հողն ու կրակը, իսկ հինգերորդը՝ եթերը: Խաղն ունի վեց փուլ՝ մինպար, մեկնուկ, երկնուկ, թաք ու երեքնուկ, շնուկ, ճանտաս: Քարերից մեկը պահում են ձեռքի մեջ, մյուսները՝ գետնին: Ձեռքի մեկ քարը օդ գցելով՝ փորձում են գետնի քարերը ափով վերցնել, մինչև վերև նետած քարն էլ կբռնեն: Այդպես՝ մինչև բոլոր քարերը մեկ ափով հավաքում են:	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ
10.	**ԳՈՐԾՆԱԳՈՐԾ /լաֆտա/**	Այս խաղը խաղում են երկու թիմով՝ խփողներ և մեջ խաղացողներ: Մինչև խաղը սկսելը խաղացողները սահմանում են տարածք, թե որտեղից որտեղ պիտի կանգնեն գնդակով խաղացողները, թիմի ավագները ընտրում են իրենց թիմերի մասնակիցներին «ցելայով», «չինգաչունգով», «ոտք գցելով»: Այդ մեթոդներից մեկով որոշվում է նաև, թե առաջինը որ թիմն է խաղալու: «Խփող» թիմի անդամները կանգնում են սահմանված տեղերում և սկսում են գնդակով խփել «մեջ խաղացողներին»: Գնդակը ում դիպչում է, դուրս գալիս: Իսկ	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ

		եթե նրանցից մեկը կարողանում է օդում «պաս» բռնել, մեկ միավոր է գումարվում իրենց թիմի օգտին, որը կարող են օգտագործել կամ դուրս եկած խաղացողին նորից խաղի մեջ ընդգրկելով, կամ վերջում, երբ մենակ մնացած խաղացողը պետք է միայնակ խաղա։ Այս պարագայում էլ կամ խաղացողի անվան տառերի չափով պետք է խուսափի գնդակից, կամ նախապես սահմանված թվով։ Եթե մասնակիցը, ում անվանում են աքլոր, կարողացավ խուսափել գնդակի հարվածներից, նրա թիմը նորից է մտնում խաղի մեջ, եթե ոչ՝ «խփող» թիմն է սկսում «մեջ խաղալ»։	
11.	**ՀԱՎԱԼԱ**	Այս խաղը մեծ տարածում ունի Գորիս համայնքում։ Խաղում են առավելապես տղաները։ Տղաներից մեկը կռանում է՝ ձեռքերը դնելով ծնկներին։ Մյուս տղաները, ոտքերը լայն բացելով, թռչում են կռացած տղայի վրայով։ Ում ոտքերը դիպչում են կռացած տղային, նա է կռանում նույն դիրքով։	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ
12	**ՉԻՆԳԻԼԻ**	1 Փոքր փոսի վրա հորիզոնական փայտե ձող է դրվում, ապա խաղացողը ավելի երկար ձողով նետում է փոսի վրայի ձողը՝ օդում հարվածելով։ Եթե խաղացողներից մեկին հաջողվում է բռնել ձողը, նա է շարունակում, եթե ոչ՝ երկար ձողով հաշվում են, թե ինչ հեռավորության վրա է հայտնվել նետված ձողը։ 2 Խաղացողը բռնում է երկար ձողը, վրան խաչաձև դնում կարճը, նետում՝ օդում հարվածելով, եթե որևէ մեկը բռնում է, նա է շարունակում, եթե ոչ՝ խաղացողը, դարձյալ չափվում է հեռավորությունը։ 3 Խաղացողը ձողը բռնում է այնպես, որ բռունցքից երևում է 2-3 սմ, ապա խաչաձև դնում է կարճը, նետում օդ՝ հարվածելով երկար ձողի	Մեղրի համայնք

		ետնամասով, եթե խաղացողներից մեկը բռնում է ձողը, նա է շարունակում, եթե ոչ՝ խաղացողը, նորից չափվում է հեռավորությունը։ Հաղթում է նա, ով ձողը նետել է ավելի հեռու։	
13	**ՏԱ-ՏԱ**	Խաղը հորինվել է 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Խաղում էին հիմնականում տղաները, փայտից կամ մետաղական լարից պատրաստում էին ավտոմատներ կամ ատրճանակներ, բաժանվում խմբերի /մերոնք և նեմեցները/ պայմանական խրամատներ կամ բարիկադներ էին «կառուցում» և սկսում կրակել միմյանց վրա։ Գոռում էին՝ «տա-տա» /կրակոցի ձայն/ և «խփում» իրար։ Կրակում էին «բարիկադներից» դուրս եկածներին, հաղթում էր այն թիմը, որն ավելի քիչ «զոհեր» ունի։	Կապան համայնք
14	**ԲՌՆՈՑԻ /«հետանանելան»- հետևից ընկնել/**	Խաղը սկսում են շրջանաձև կանգնելով, մեկը շեշտված վանկերով և հերթականությամբ մատնացույց անելով արտասանում է ազգային խաղերի ժամանակ ստեղծված քառատողերից /օրինակ՝- Ալա-բալա նիցա, դուրս կաբա նիցա և այլն/։ Քառատողը կրկնվում է այնքան, մինչև որ բոլորը հերթով դուրս են գալիս։ Վերջին մնացողը պետք է հերթով բռնի ընկերներին /գերի վերցնի/։ Չբռնվելու և գերի չընկնելու համար խաղացողները պետք է կռանան կամ պպզեն, հետո շարունակեն վազել, փախչել բռնողից։	Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Քաջարան, Մեղրի համայնքներ